

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՐԶԱԶԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ  
ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ ԿՏԱԿՐ\*).

Թիֆլիսաբնակ Շուշի քաղաքացի Միրզաջան Խաչատրեանցն կամենալով իւր սեփական կարողութիւնը կտակել բարեգործական նպատակով, որ, իբրև որդեգուրք անձն, բարի յիշաաակ մնայ իւր մահից յետոյ, 1907 թ. յունիսի 2-ին Թիֆլիսում Լոռն Մհերքեան նօտարի մօտ պաշտօնապէս անում է հետնեալ կտակը\*\*): «Ես, Շուշի քաղաքացի Միրզաջան Կարապետեան Խաչատրեանցս առողջ մտօք և հաստատուն յիշողութեամբ ի դէպս իմ մահուան յայտարարում եմ իմ հետնեալ կամքը. Առաջին—բացառութեամբ իմ տնային շարժական գոյքի, որի մասին կը լինի ներքեռում, բոլոր կարողութիւնս թէ շարժական և թէ անշարժ, որը իմ մահուան բոպէին կերևայ իբրև ինձ պատկանեալ և որի վրայ օրէնքով էլ կունենամ իրաւունք, դրանց թւում և իմ վաճառականական ձեռնարկութեանց գործերը, պէտք է իմ կտակակատարների միջոցով համաձայն սոյն կտակի ենթարկուեն լիկուիդացիայի և վերածուեն կանխիկ դրամի և ապա այդ բոլորը իմ մահից յետոյ երեան եկած գրամագլխի հետ միասին կտակակատարներս, իրենց հայեցողութեամբ, կըյանձնեն որ և է գրամատուն և. Էջմիածնի Հայ-Լուսաւորչական Սինօդի անունով՝ իբրև մշտնջենական և անձեռնմխելի գումար:

Երկրորդ ս. Էջմիածնի Սինօդը վերոյիշեալ անձեռնմխելի գրամագլխի տոկոսներից պէտք է իւրաքանչիւր տարի իմ կնոջս—Հոլիվսիմէ Արտեմեան Խաչատրեանցին տայ երկու հազար հինգ հարիւր ոռոբլի, քանի նա կենդանի է, իսկ մնացած տոկոսները յիշեալ գրամագլխի՝ մի-

\* ) Տես գործ Սինօդի 71/1909, 9/1912 և 7/1913 թուականներին

\*\*) Բուն կտակից, որ գրուած է ոռուսերէն, թարգմանարար ամբողջութեամբ բերում ենք կտակակատարի խօսքերը:

ացնելով նաև կնոջս մահից յետոյ այն գումարի տոկոսիք ները՝ որը ստանում էր նա կենդանութեան ժամանակ, պէտք է հաստատուեն իմ անունով թոշակներ, ինկատի առնելով այդ տոկոսների մուտքի չափը։ Այդ թոշակներով պէտք է շարունակն իրենց ուսումը Ռուսաստանի աշխարհիկ կամ հոգեոր բարձրագոյն դպրոցներում կամ արտասահմանում այն հայ-լուսաւորչական երիտասարդները՝ որոնք իրենց նուիրել են հոգեոր գործունէութեան հայ ժողովրդի մէջ և որոնք ստացել են միջնակարդ կրթութիւն և էջմիածնի հոգեոր ձեմարանում և կամ պետական, կամ արտասահմանեան դպրոցների ծրագրով այլ դուգընթաց դպրոցներում յաջող աւարտել<sup>\*</sup>): Թոշակաւորներ նշանակելու համար պէտք է Սինօդի մի քանի անդամներից բաղկացած յանձնաժողով կազմուի, այդ յանձնաժողովը կազմելով խորհրդակցութիւն՝ վճռում է թոշակաւորների ընտրութեան հարցը՝ դատելով համաձայն նրանց միջնակարդ դպրոցներում դասընթացն անցնելու ժամանակ ցոյց տուած յառաջադիմութեան։

Երրորդ՝ իմ տնային դոյքը եւ կտակում եմ իմ կնոջ Հոփիսիմէ Արտեմեանին՝ իրքև սեհպականութիւն նորան,

Չորրորդ՝ իրքև կտակակատարներ և իմ կամքս՝ այս կտակի նկատմամբ իրազործողներ նշանակում եմ իմ եղբօր որդի Թէոդորոս Խաչարեանին և Սոէքսանդր Մելիք-Ազարեանին։

Կտակակատար Միրզաջան Խաչարեանը վախճանուել է 1908 թ. դեկտեմբերի 21-ին, իսկ կտակը հաստատուել

\* ) Այս կտորի բնագիրը այստեղ բերում ենք՝ որ թիւրիմացութեան դէպքում ինկատի առնուի. «Должны быть учреждаемы, смотря по сумме доходности этихъ процентовъ, стипендій имени моего для продолженія въ высшихъ свѣтскихъ и духовныхъ учебныхъ заведеніяхъ Россіи и запраницей образования молодыми людьми изъ армяно-григорянъ, посвятившими себя духовной дѣятельности среди своего народа, получившими среднее воспитаніе въ Эчмадзинской Духовной Академіи и въ другихъ параллельныхъ по курсу учебныхъ заведеніяхъ Имперіи и въ ея и окончившими таковыя съ успѣхомъ.»

է Թիֆլիսի շրջանային դատարանում 1909 թ. նոյեմբերի 3-ին:

Հանգուցեալ բարերար Մ. Խաչատրեանի մահից յետոյ Սինօդն ստանալով շրջանային դատարանում հաստատուած կտակի պատճենը՝ հետամուտ եղաւ կտակակատարների միջոցով պարզելու հանգուցեալի ամբողջ կարողութեան մանրամասն հաշիւը: Զանազան գրադրութիւններից յետոյ 23-ն փետրվ. 1911 թ. Սինօդն ստանում է կտակակատարներից Խաչատրեանց առևտրական տան հաշուեկշխոր, որից պէտք է երևար հանգուցեալ Մ., Խաչատրեանին պատկանելիք բաժինը: Այսուհետև Սինօդը կտակակատարների միջոցով որոշ համաձայնութեան գալով առևտրական տան հետ մի քանի գոյքերի գնահատութեան նկատմամբ՝ հետզհետէ կանխիկ ստանում է զրամները հետեւեալ հաշուով, որ առաջ ենք բերում այստեղ կտակակատարների 20-ն մայիսի 1913 թուով Սինօդին ուղարկած զեկուցումից.

«Ինչպէս յայտնի է ս. Սինօդիդ մէր 1911 թ. մայիսի 13-ին ներկայացրած զեկուցումից, Սինօդիդ նոյն թուի մայիսի 2-ի հրամանի համաձայն մենք, հանգուցեալ Միքաջան Խաչատրեանցի կտակակատարներս վերջացրինք հանգուցեալի հաշիւները «Մ. Խաչատրեանց և Ընկ.» առևտրական տան հետ նօտարական ստորագրութեամբ, որով յիշեալ առևտրական տունը պարտաւորւում էր վճարել հանգուցեալին հասանելիք բաժինը հետեւեալ գումարներով և ժամանակներով»

թ. 4.

1. Նօտարական ձեռք ստորագրութիւն կազմելու օրը  
(այդ ստորագրութիւնը մենք իւր ժամանակին ուղարկել ենք Սինօդիդ) առևտրական տունը պիտի վճարէր մէկ հարիւր հազար սուրբի. . . . . 100000 —
2. 1911 թուի դեկտեմբերի 31-ին ևս կանխիկ քառս և մէկ հազար չորս հարիւր հօթանասուն և մէկ սուրբի 80 կոպէկ . . . . . 21471 80
3. 1912 թուի դեկտ. 31-ին ևս կանխիկ երեսուն և եօթն հազար վեց հարիւր երեսուն և չորս սուրբի 8 կոպ. 37634 08
4. Շինադադիբ հօգի արժէքից հանգուցեալին հասանելիք բաժինը 42.95%<sub>0</sub>
5. Թիֆլիսի նաւթարդինարերու ընկեր. Փայեր 4 հատ:

Ներկայ գրութեամբ, մենք կտակակատարներս, պատիւ-  
ունենք հաստատելու Սինօղիդ, որ մենք արդէն մեր պար-  
տականութիւնները կատարել ենք Սինօղիդ առաջ, ստա-  
նալով «ԵՄ». Խաչատրեանց և ընկ.» առևտրական տանից  
հանգուցեալին հասանելիք վերոյիշեալ գումարները և մըտ-  
ցնելով պետական բանկը իրեւ մէտական աւանդ Սինօղիդ  
անուամբ հետևեալ ձեռվ

Բ. Կ.

1. Մացրած է պետական բանկը 1911 թ. նոյեմբերի 1-ին  
№ 5 ընկալազրով (ի դիմաց 100,000 ռուբլու) նոյն  
թուի մայիսի 13-ից ստացուած տոկոսիքով հանդերձ  
հարիւր մէկ հազար ինն հարիւր եօթանասուն և մէկ  
ռուբլի, որը հաստատուած է Վրաստանի և Խմերէթի  
թեմի կառավարչի միջոցով Սինօղիդ 1911 թ. նոյեմ-  
բեր 23-ին մեզ ուղած գրութեամբ . . . . . 101971 —
2. Մացրած է պետական բանկը 1911 թ. դեկտեմբերի  
31-ին № 13 առմասով, ըստ Սինօղիդ 1912 թ. մարտի  
5-ի № 431 վաւերազրի տասն և վեց հազար չորս հա-  
րիւր եօթանասուն ռուբլի 16470  
Վճարուած է համաձայն Սինօղիդ 1911 թ. դեկտ.  
7-ի № 2978 հրամանի Տփխիսի Մուղնոյ Սուբբ Գէորգ  
եկեղեցու ծխական հոգարարձութեան դարբոցի օգտին,  
ըստ ներփակեալ ստորագրութեան 5000 ռուբլի, որ  
ընդամենը ծախսերի հետ (1 ռ. 80 կոպ.) միասին կանի 21471 80
3. Մացրած է պետական բանկը 1912 թ. դեկտեմբ. 31-ին  
համաձայն Սինօղիդ սոյն տարուայ յունվարի 30-ի  
№ 198 վաւերազրի, երեսուն ինն հազար երեք հարիւր  
յիսուն ռուբլի, որից ըստ երրորդ կէտի, վերջին վճարն  
կազմում է հանդերձ մանր ծախքերով (1 ռ. 8 կոպ.) 37634 ռ. 8 կոպ. իսկ մեացեալ զումարը, որ անում է  
1718 ռուբլի կազմում է ըստ 4-րդ կէտի Բինազադի  
հողի 4000 ռուբլի գնահատուած արժէքից հանգու-  
ցեալին հասանելիք 42,95 տոկոսը, ինչպէս որ Սինօղիդ  
իւր 1912 թ. յուլիսի 16-ի, № 1533 գրութեամբ հրա-  
մայած էր . . . . .

39350 —

Ինչ վերաբերում է 5-րդ կէտով Սինօղիդ հասանելիք  
4 հատ Թիֆլիսի Նալթարդիւնաբերող Ընկերութեան փա-  
յերին, այդ փայերը, որոնք իրենց անուանական գներով  
արժեն իւրաքանչյւրը 250 ռուբլի, այսինքն չորսը միա-

սին 1000 ռ., մենք ծախեցինք 1400 ռուբլով, որովհետև 1400 ռուբլի գումարը ինքն ըստ ինքեան շատ փոքր էր և չարժէր պետական բանկն իրքեւ մշտական աւանդ մտցնել, ուստի մենք յանձնեցինք հանգուցեալի այրիին ի հաշիւ 1914 թ. Նրան հասանելիք 2500 ռ.ր., ուրեմն եկող 1914 թ. այրին պէտք է ստանայ Սինօղիցդ միմիայն մէկ հազար հարիւր ռուբլի (1100 ռ.)։»

Այսպիսով կտակակատարները Սինօղի անունով մտցրել են պետական բանկի մշտնջենական շահեցողութիւն 101970 + 16470 + 39350 ռ. ընդամենայն 157,790 ռուբլի, որի  $\frac{0}{0}/0$ -ներով Սինօղը՝ համաձայն կտակի, պէտք է հանդուցեալ Միրզաջան Խաչատրեանցի անունով թոշակաւորներ պահի. Այդ գումարը մինչև ներկայ 1914 թ. յունվարի 1-ը  $\frac{0}{0}/0$  է բերել 5272 ռ. 07 կոպ., որը մայր գումարի հետ միասին լինում է 163,062 ռ. 07 կոպ.։

Համաձայն կտակի Սինօղն իւր 18 սեպտ. 1913 թ. օրագրական որոշումով, ըստ նախընթաց հաճութեան Վեհակառ Հայրապետի, նշանակել է Սինօղի անդամներից իրքի թոշակաւորներ ընտրող Յանձնաժողովի անդամներ Տ. Եփրեմ և Տ. Մատթէոս Եպիսկոպոսներին և Տ. Բարդէն վարդապետին։

Հանգուցեալ բարերար Միրզաջան Խաչատրեանի արած բարեգործութիւնը արժանի է գնահատութեան: Նորա բարի անունը միշտ կըմնայ լիշտակութեան արժանի և նորա շնորհիւ բարձրագոյն ուսում ստացած հայ գործիչները կենդանի վկաներ կըլինեն հանգուցեալի արած գեղեցիկ գործի։

Շնորհակալութեան արժանի են յարգելի կտակակատարները՝ որ իրենց բարոյական պարագը կատարեցին և իրագործեցին հանգուցեալի կամքը։

Բ. վ. Ա.

